ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ՝ Ա. ԱՎԱԳՅԱՆ

01.09.2022թ.

Բյուրեղավանի Ս. Վարդանյանի անվան ավագ դպրոցի 2022-2023 ուսումնական տարվա դասղեկի աշխատանքային պլան

10-րդ «Գ» դասարան

Դասղեկ՝ Ա. Հարությունյան

Դասարանի բնութագիրը

X^{գ} դասարանը կազմավորվեց այս ուսումնական տարում: Բաղկացած է 9 աղջիկներից և 5 տղաներից:

Հոսքը ընդհանուր է: Չնայած այն հանգամանքին, որ դասարանը նոր է կազմավորվել, արդեն ունենք միասնական և լավ կոլեկտիվ, աշակերտները համախմբված են և հարգալից մեկը մյուսի նկատմամբ: Դասարանում տիրում է սեր, խաղաղություն և համերաշխություն:

ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԸ՝

1) դաստիարակչական աշխատանք է կատարում իր դասարանի սովորողների շրջանում՝ սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժական աշխատողների հետ.

2) նպաստում է հանրակրթական դպրոցի եւ ընտանիքի մանկավարժական միասնական պահանջների ապահովմանը սովորողների նկատմամբ.

3) անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն.

4) իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, հանրակրթական դպրոցի տնօրենությանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների եւ վարքի մասին տեղեկատվություն.

5) կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ եւ այլ միջոցառումներ.

6) հանրակրթական դպրոցի մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում սովորողին կարգապահական տույժի ներկայացնելու հարցը.

7) արգելում է սովորողների, ուսուցիչների եւ ծնողների այն նախաձեռնությունները, որոնք կարող են սովորողի առողջության, կյանքի համար վտանգ պարունակել, ինչպես նաեւ խաթարել ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացումը:

Դաստիարակչական աշխատանքների ուղղությունները՝

1.Աշխատանքային եւ ֆիզիկական դաստիարակություն

2.Ռազմահայրենասիրական եւ հոգեւոր դաստիարակություն

3. Գիտաճանաչողական դաստիարակություն

4. Գեղագիտական դաստիարակություն

Նախատեսված ուսումնադաստիարակչական աշխատանքներ՝ ըստ ամիսների

Ամիսը	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Նշումներ
Սեպտեմբեր	Գիտելիքի օր:	
	Ծանոթանալ նոր դասընկերների հետ:	
	Հրավիրել դասարանական ժողով,ընտրել դասարանի ավագ և աշակերտական խորհրդի անդամներ:	
	Ապահովել աշակերտների դասագրքերը:	
	Հետևել աշակերտների հաճախումներին, կարգապահությանը,սանիտարական վիճակին:	Ուստարվա ընթացքում
	Զրույց <<Հայրենասիրություն>>թեմայով:	
	<<Հարկավոր է ազնիվ ու անկեղծ հարաբերություններ դասարանում>>,նոր դասարան կազմավորելու համար:	
	Հետևել աշակերտների մասնակցությանը Ֆիզկուլտուրայի դասերին՝<<Սպորտով զբաղվելը նորաձևություն է, թե առողջության գրավական>>:	Ուստարվա ընթացքում
Հոկտեմբեր	Զրույց <Իմ սիրելի ուսուցիչը և ում կցանկանայիք նմանվել>>:	
	Հրավիրել ծնողական ժողով,ընտրել ծնողական խորհրդի նախագահ և անդամներ:	
	Անցկացնել զրույց <<Ինչ է նշանակում լինել քաղաքակիրթ մարդ և ինչ է բարոյական դաստիարակությունը > > թեմայով:	
	Կազմակերպել տեղեկատվական դասղեկի ժամեր՝ 1.Իմ երկրի պատմությունը 2.45 րոպե աշխարհի շուրջ 3.Թեմաներ,լուրեր,լրագրողներ,որոնց	

	թեմաները հետաքրքրում են ինձ:	
Նոյեմբեր	Կազմակերպել անհատական զրույց դասավանդող ուսուցիչների և աշակերտների հետ:	
	Ստուգել և հետևել աշակերտների առաջադիմությունը և հաճախումները:	Ուստարվա ընթացքում
	Հրավիրել ծնողական ժողով . ամփոփել առաջադիմության ընթացքը:	
	Կազմակերպել ծնողների մասնակցությունը դպրոցի ուսումնադաստիարակչական գործ-ընթացի կառավարմանը:	
Դեկտեմբեր	Կատարել դասալսումներ,կապ պահպանել Դասավանդող ուսուցիչների հետ,շտկել թերություններն ու բացթողումները:	
	Կազմակերպել էքսկուրսիա,այցելել որևէ թատրոն,որը կհամապատասխանի իրենց անցած թեմաներին:	
	Պատրաստվել մասնակցություն ցուցաբերել ամանորյա միջոցառմանը:	
	Ամփոփել առաջին կիսամյակի արդյունքները աշակերտների հետ:	
Հունվար	Հրավիրել ծնողական ժողով,ամփոփել առաջին կիսամյակի առաջադիմությունը և կարգապահությունը;	
	Աշակերտի արժեքային համակարգի ձևավորումը;	Ուստարվա ընթացքում
	Զրույց <<Հայոց բանակ>> թեմայով:	
Փետրվար	Կազմակերպել անհատական հանդիպումներ աշակերտների հետ և պարզել, ծանոթանալ նրանց հուզող հարցերին:	Ուստարվա ընթացքում
Մարտ	Ուսումնասիրել աշակերտների զանազան Նախասիրությունները,կազմակերպել. 1.<<Հետաքրքրասերներ>> 2.<<Բանիմացներ>> 3 .<<Առաջատարներ>> 4.<<Տաղանդներ>>	
Ապրիլ	Սիրում եմ գարունը…	

	Կազմել թեստ՝ աշակերտների հաղորդակցման և համագործակցման, մտությունների զարգացման համար:	Ուստարվա ընթացքում
	<<Հասկանանք մեկս մյուսին>>	Ուստարվա ընթացքում
	Իմ երազանքներն ու նպատակները:	Ուստարվա ընթացքում
Մայիս	Ամփոփել երկրորդ կիսամյակը:	
	Կազմակերպել տարեվերջյան էքսկուրսիաներ:	